ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի սեպտեմբերի 09-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/03»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 06.09.2024թ.-ին ստացված հարցադրման և դրա վերաբերյալ 09.09.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի Պատվիրատու
Սույն մրցույթի համակարգչի բնութագրում նշված է 3-րդ սերնդի կոշտ սկավառակ, այսօր հասանելի են արդեն 4-րդ սերնդի կոշտ սկավառակները, որոնք հագեցված են TLC, այլ ոչ թե QLC տեխնոլոգիայով, որն ավելի արդյունավետ, հուսալի ու ավելի բարձր դիմացկունությամբ օժտված տեխնոլոգիա է: Տվյալ տեխնոլոգիան նախընտրելի է օգտագործել մասնավորապես համակարգչի հիմնական հիշողության պարագայում: Կարո՞ղ ենք արդյոք առաջարկել նշված՝ ավելի նոր սերնդի, կոշտ սկավառակով համակարգիչ:»:

<u>Պարզաբանում</u>

««ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով, սահմանված է. «…. հիշողություն՝ հիմնական կոշտ սկավառակ՝ առնվազն 1 x SSD 512GB, M.2 2280, PCIe Gen3 QLC»:

Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/03» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/03» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: